Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԻՆՔՆԱՀԱՍՏԱՏՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Տաղանդի ծլարձակումն սկսեց 1872 թվականից, երբ Թիֆլիսում Գրիգոր Արծրունու «խմբագրապետությամբ» հրատարակվող «Մշակ» շաբաթաթերթը հունիսի 1-ի հերթական համարում հրատարակեց մի պատմվածք՝ «Գեղեցիկ Վարդիկը» խորագրով, ընթերցողներին այն ժամանակ շատ քիչ բան ասող «Մելիքզադե» ստորագրությամբ։ Գրական ճանապարհը, մինչև «Գեղեցիկ Վարդիկին» հասնելը, հակասական էր եղել։ Սալմաստեցի երիտասարդ Հակոբ Մելիք-Հակոբյանցը, հետագայում՝ Րաֆֆին, գրական բեմելն սկսել էր որպես բանաստեղծ, գրել էր շուրջ յոթ տասնյակ այդ բնույթի գործեր, որոնցից, ի դեպ, «Սառա» պոեմը բաղկացած էր 240 քառյակից, և որոնք ժամանակակիցների կողմից բացասաբար էին արժեքավորվել։ Շնորհալի երիտասարդին նկատել էր Գրիգոր Արծրունին, հրավիրել էր նրան աշխատակցելու «Մշակին», բայց և ցույց էր տվել հետագա գրելիքի՝ խստորեն որոշակի ծրագիր-ուղեցույցը, այսինքն՝ «Դուք պարսկաստանցի եք և պտտել եք Թուրքահայաստանը։ Տվեք մեզ թարմ նյութեր այդ երկրների մասին»։ Իսկ սա նշանակում էր, որ Մելիք-Հակոբյանցը պետք է կարողանար բացասել ինքն իրեն, պետք է հրաժարվեր չափածոյից և անցում կատարեր դեպի գեղարվեստական արձակը։ Ներքին վերուվարումներից ու հուզումնաշատ ապրումներից հետո, նա կարողացավ այդ անել։ Արծրունու պահանջի գեղարվեստական երևակումն էլ ահա եղավ «Գեղեցիկ Վարդիկը»։

Պատմվածքը ուշադրության արժանացավ, հեղինակի մասին դրվատական խոսքեր ասվեցին։ Ոգևորված դրանից, «Մելիքզադեն» հաջորդաբար հրատարակեց «Կուսագրություն», «Անբախտ Հռիփսիմեն», «Մի օրավար հող» և այլ պատմվածքներ, որոնք դարձյալ աննկատ չմնացին։ Հեղինակի կեղծանվան կողքին սովորական դարձան «քանքարավոր», «շնորհաշատ» և նույնիսկ «տաղանդավոր» բառերը։ Իսկ այս բոլորը եկան մեկ որոշակի բան ապացուցելու. ծլարձակող տաղանդը թե՛ գրապատմական, և թե՛ հասարակական առումով, անվերապահորեն ճիշտ ուղու վրա էր կանգնած։ Րաֆֆի-արձակագրի՝ որակապես նոր ինքնահաստատումը արդեն կապվում էր ժամանակի

նշանավոր իրադարձության՝ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի և նրա տխուր հավելվածը հանդիսացող «Հայկական հարցի» հետ։

Պատերազմը ակնբախորեն ցույց տվեց ռուսական երկգլխանի արծվի ռազմական առավելությունը օսմանյան կիսալուսնի նկատմամբ, բայց և ցուցադրեց դիվանագիտության ամբողջ նենգամտությունը մանավանդ «Հայկական հարցի» կապակցությամբ, որն, ի վերջո, ավարտվելու էր «Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդված» և «Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդված» ձեռնածությամբ։ Ռուսաստանի իշխանության ներքո անցնելու հետևանքով հայ ժողովրդի փրկությունը ոչ միայն մնաց որպես վարդագույն երազանք, այլև օսմանյան «բարեգութ» կայսրությունը, որպես պատրվակ օգտագործելով «էրմենի միլլեթի» հենց այդ նկրտումը, սկսեց «չնկատել» այն բազում-բազմաթիվ ավարառումները, սպանությունները, բռնի իսլամացումները, մանկապղծությունները, որոնք մահմեդական խառնամբոխը դաժան հետևողականությամբ իրականացնում էր ամբողջ երկրում։ Այսպես էր, որ ծայր առավ շեյխ Ջալալեդդինի ղեկավարած հրոսակախումբը, որն ասպատակում էր պատմական Հայաստանի ամբողջ տարածքը, և որի կատարած բարբարոսությունները «աննախադեպ էին արևմտահայ կյանքի վերջին հարյուրամյակի ընթացքում» (Ս. Սարինյան)։ Եվ ինչպես պատահում է նման դեպքերում, օրհասական վիճակը ծնեց իր հրամայականը՝ միայն սեփական ուժերին հույս դնելու, զենքով ու հրացանով իր կյանքն ու կայքը պաշտպանելու գաղափարաբանությունը։ Դա, ըստ ամենայնի, արդեն քարոզում էին հայ գրողները։ Ժամանակի կարգախոսն էր դարձել Մ. Նալբանդյանի հայտնի բանաստեղծության երկտողը՝ «Ներկա օրերում այլ ինչ սև քնար, սուր է հարկավոր կտրիճի ձեռքին»։ Նրան լրացնում էր Պատկանյանը. «Ամոթ է քեզ, հազար ամոթ, որ զենք չունիս քո ձեռքին»։ Հետ չէր մնում Շահազիզը. «Բավ է սեղմես ատամունք, խաչի փոխան սուրը դարձրու պաշտամունք»։ Նույնը՝ հրապարակախոսության լեզվով, անում էին Գրիգոր Արծրունին, Մատթեոս Մամուրյանը...

Այսպես, ուրեմն, կար պատրաստի թեման՝ շեյխ Ջալալեդդինի ասպատակությունները, կար օսմանահպատակ հայության համար հասունացած պահանջ-պատգամը «զենք ի բռին առնելու» «շարժիչ իդեան» (Գր. Արծրունի)։ Այս բոլորը

հիանալի գիտեր Ռաֆֆին և եռանդով գործի անցավ։ Վիպակը ընթերցողների ուշադրությանը ներկայացվեց դեռ մինչև նրա հրատարակությունն սկսելը։ 1878 թ. մայիսի 13-ին «Մշակը» իր «Պատասխաններում» տեղեկացրեց, որ «Ստացանք «Ջալալեդդին» վիպասանությունը։ Արդեն սկիզբը տվինք շարելու։ Առաջին կտորը դուրս կգա հետևյալ համարում»։ Սա նշանակում է, որ այդ թվականին «վիպասանությունը» լրիվ ու վերջնականապես պատրաստ էր հրատարակության համար և հանձնված էր խմբագրությանը։ Երբվանից էր հեղինակը սկսել աշխատանքը իր գործի վրա, չգիտենք. ավել կամ պակաս հավանական ենթադրություններից բացի, առայժմ ոչինչ ասել հնարավոր չէ։ Ինչևիցե, «Մշակը» կատարեց իր խոստումը և անմիջապես հաջորդ համարից «Ջալալեդդին. մի պատկեր նրա արշավանքից» ընդհանուր խորագրի ներքո սկսեց հրատարակել խոստացած գործը, հեղինակի՝ արդեն ճանաչում ստացած «Մելիքզադե» կեղծանունով։

Ըստ երևույթին, թե՛ «Մշակ» շաբաթաթերթի ու Գրիգոր Արծրունու, և թե՛ նաև իր՝ հեղինակի համար էլ անսպասելի կերպով «Ջալալեդդինը» շոնդալից հաջողություն ունեցավ։ «Մելիքզադեի»՝ որպես հայ գրականության դասականների շարքում իր տեղն ունենալու համար հայտ ներկայացնողի փաստը, արդեն որևէ տարակույս չէր առաջացնում։ Մինչ այդ պարսկահայ գյուղի ու գյուղացու անագորույն լլկանքները պատկերող կենցաղային փոքրաշունչ դրվագները ընդամենը պատմվածքների սահմաններում գեղարվեստական ստեղծագործության նյութ դարձրած Ռաֆֆին, անցնելով լայնակտավ ստեղծագործության, «Ջալալեդդինում» դրսևորեց Մերձավոր Արևելքի ժողովուրդների հին ու նորագույն պատմությունների, նրանց կրոնների (քրիստոնեություն, մահմեդականություն, սրանց այլևայլ տարատեսակները) զարմանալի գիտակություն, երևույթներն ընդհանրացնելու և այդ ընդհանրության մեջ առավել հատկանշականը տեսնելու խորաթափանց վերլուծական միտք, ընտրած նյութը արձակի տվյալ ժանրի հնարավորությունների միջոցով գեղարվեստորեն վերարտադրելու այնպիսի հազվագյուտ կարողություն, որից ավելի անկարելի կլիներ ցանկանալ։ Վիպակի գրական-գեղարվեստական արժեքի բարձրացմանը մեծապես նպաստում էր նրա գաղափարական նպատակաուղղվածությունը։ Տեսանք, թե որն էր

ժամանակի այրող պահանջը և «Մելիքզադեն» իր «Ջալալեդդինով» գալիս էր հենց այդ պահանջը բորբոքելու։ «Չարի հետ չար պիտի լինել, բարիի հետ բարի, – պատգամում էր վիպակի հերոսը, – հայեր, զենք ունեցեք, զենք սիրեք և զենքին ապավինեք»։ Կամ՝ «Եվ ով կարող է օգնել մի ժողովրդի որ ինքն իր ձեռքովն է սրում թշնամու սուրը։ Եվ թող անիծյալ լինին նրանք, որ սովորեցրին մեզ հնազանդ լինել, համբերող լինել»։ Կամ՝ «Ով հայրեր, ով պապեր, եթե դուք այդ վանքերի տեղը բերդեր շինեիք, եթե դուք անուշահոտությանց տեղ վառոդ ծխեիք, այժմ մեր երկիրը բախտավոր կլիներ։ Ով հայոց հին աստվածներ, դուք փրկեցեք մեզ»։ Նման բնութագրական մեջբերումներ կարելի է էլի բերել, իսկ դրանք որոշակի են այնքան, որ համապատասխան մեկնաբանությունների կարիք չունեն։ Իսկ «Ջալալեդդինի» հաջողությունը շարունակում էր զարգանալ վերընթաց կորագծով, «Մշակի» խմբագրությունը բառացիորեն հեղեղվեց դրվատական նամակներով։ Վիպակի տպագրությունը հազիվ ավարտված, այն սկսեց հրատարակվել ռուսերեն թարգմանությամբ «Տբիլիսսկի վեստնիկ» շաբաթաթերթում և այսպիսով, ռուս ընթերցողը կարողացավ նրան կարդալ հայերեն բնագրի հետ գրեթե միաժամանակ։ Նույն 1878 թվականին, կրթական-մշակութային գործիչ, թարգմանիչ (ռուսերենից-հայերեն) Միրիմանյանը նամակով դիմեց «Մշակի» «պարոն խմբագրին», հայտնելով իր պատրաստակամությունը «պարոն Մելիքզադեի գեղեցիկ և շատ հետաքրքիր վեպ «Ջալալեդդինը» վերստյան թարգմանել ռուսերեն և տպել Թիֆլիսում»։ Մի քանի տարի անց, 1884 թ. Մոսկվայում, հեղինակի՝ լեզվա-ոճական բնույթի որոշ շտկումներից ու լրացումներից հետո, առանձին գրքով լույս տեսավ «Ջալալեդդինը»։ Սկսվեց նրա հաղթական երթը...

Հասկանալի է, որ ընթերցողների աննախադեպ ջերմ վերաբերմունքը դեպի «պարոն Մելիքզադեն» և նրա «երկասիրությունը», չէին կարող հարգանքի ու երախտագիտության համապատասխան վերաբերմունք չառաջացնել հեղինակի մոտ։ Պահպանվել է նրա հուզումնառատ նամակ-շնորհակալությունը՝ գրված Ագուլիսից, 1878 թ. հունիսի 11-ին, որը առ այսօր ուշադրության չի արժանացել բաֆֆիագետների կողմից։ Նամակը մեջ ենք բերում ամբողջությամբ։

«Ես ստացա զանազան քաղաքներից մի քանի նամակներ շատ ստորագրություններով, որոնց մեջ համակրություն էին հայտնում «Ջալալեդդին» վեպի վերաբերությամբ։ Հայ հեղինակի համար դա էլ մեծ մխիթարություն է, որ իր աշխատությունը գնահատվում է, եթե ոչ նյութապես, գոնե բարոյապես։ Ես ուրախ եմ, տեսնելով, որ ստորագրությունների մեծ մասը պատկանում է նոր սերնդին, – ռեալական գիմնազիոնի ուսանողներին, – երբ հեղինակի խոսքը արձագանք է գտնում մանուկ սրտերի մեջ, նա երջանիկ է... Սերմը բարեբեր հողի վրա է ընկնում։

Սեղմում եմ ձեր ձեռքը, ով ապագայի թարմ հույսեր, դուք ողջ լինեք»։

Տաղանդն, այսպիսով, վերջնականապես գտել էր իրեն և հայ գրականության անդաստանում բացել էր սեփական ակոսը՝ հզոր, ինքնատիպ ու հաստատուն ակոսը։ Հաջորդը եղավ «Դավիթ բեկ (1722-1728)» պատմավեպը, որը սկսեց հրատարակվել «Մշակում», 1880 թ. դեկտեմբերից, և որի գրական-հասարակական հնչեղությունը շատ ավելի մեծ եղավ, քան նախորդինը, արդեն ձևավորվում և նյութական կերպարանք էր ստանում «Կայծերը»։

Տնտեսագետ, 1986, № 11, մարտի 26